«Անձնաչափ կենարարին Քրիստոսի լայնութիւն տապանափորած վիմին գիրկ ու կէս հեռի, են ի միջի գմբէթին սրբոյ կենարար Գերեզմանէն, եւ ի վերայ եկեղեցւոյն, որ չինեալ է 100 կանգուն բարձրութիւնն և 100 լայնութիւնն՝ բոլոր յայս և յայն կողմն երկոտասան սիւնք ներքոյ, և երկոտասան ի վերայ վերնատանն, և յայն վերնատանն գեղարդն և սկաւառակն պատեալ ոսկւով. իսկ եկեղեցին կաթողիկէ, որ մատուռն անուանի, որ է Գիւտ Խաչի՝ 20 կանգուն հեռագոյն ի Ցարութենէն, 65 սիւն վեր եւ ի ներքոյ երկայնութեան: Իսկ սուրբ Գողգոթայի եկեղեցին 10 քայլ հեռու է ի Ցարութենէն, որ Ադամայ գերեզման կոչի, և ի վերայ՝ սեղան խորհրդոյ, յորում խաչեցաւ Քրիստոս ի վիմին վերայ: Իսկ սուրբ Սիոն եկեղեցին միով ասպարիզաւ բացագոյն է ի Ցարութենէն 100 կանգուն ի յերկայնն և 70 ի լայնն, 80 սեամբք կամարակապօք, և չէ վերնատնօք, այլ թարբ կապեալ է փայտեայ, եւ պսակ փշոյն կայ ի կախ զթարբէն, որ եդին կենարարին ի գլուխ: Եւ յաջմէ եկեղեցւոյն վերնատունն խորհրդոյ և փայտեայ գմբէթ, յորում նկարեալ է զընթրեացն խորհուրդ փրկչին, յորում է սեղան խորհրդոյ եւ պատարագ մատչի ի վերնայարկին Սիոնի, և վերնատուն մի լինի (կամ վերնատունն միջին, այլ օրինակէ):

Եւ սուրբ Սիոնի ընդ աջմէ խորանն Պիղատոսի, որ Կապպաթա անուանի, և վէմն յորոյ ի վերայ կայր Փրկիչն առաջի Պիղատոսի, յոր ոտից տեղն երևի ցարդ ևս, և աւազանն ներքոյ նորին, ուր զաշակերտացն լուաց զոտսն, և յահեկէ Սիոնի բանտն, ուր զՔրիստոս արգելին, անդ սեղան է եւ պատարագ մատչի: Եւ յայնմ տեղւոջ ուր զսուրբ Կուսին դագաղն կա-